ըէր ի դուրս հանել զգործն եւ բան մի առնել։ Այս առաջին դուրս ելանելն էր թագաւորին։ Աստուած կարողութիւն տայ եւ իմաստութիւն որ այսուհետեւ բանայ զաչսն. մեզ եւ ամենեցուն շահ եւ օգուտ է։ Եւ որք իմացան և ծանեան թէ նա էր՝ բազում աւրհնութիւն տվին, բայց ոչ եղև որ մի չար կամ հաչարի գինով ի դէմ ելեր էր յազգմանէ չարին։

Երեկոյիս ի Սուրբ Նիկողոս գնացի և անտի հետ Մղտեսուն ի տուն գնացաք և նստաք մինչեւ երեկոյացաւ, եւ անտի ի տուն գնացի։

Աւրս զզափուտանն փոխեցին եւ եղին զԲէնան փաշան, որ ի տեղ Սիաւուշին գնացեալ։

Ուրբաթ (25 Ապրէլ) առաւօտուս գնացի ի մեր ժամն եւ անտի ի տուն, եւ անտի ի խանութ։ Առաւօտուս ըսկսաւ անձրեւն եւ մինչեւ իրիկունս կու գայր։ Երեկոյիս գնացի ի Սուրբ Նիկողոս եւ զհացն հետ միաբանիցն կերայ, եւ անտի ելեալ գնացի ի տուն։ Յերեկոյէս մինչեւ ի լուս Շաբաթս գայր անձրեւն եւ առաւօտուս բացաւ։ Երեկոյիս Տէրտէրս գնաց ի Նշանօրհնէք Եղիայի Զօփնոյ աղջկանն։

Եւ առաւօտուս Շաբաթ (26 Ապրէլ) գնացի ի մեր ժամն եւ զթապախն բռնեցի, եւ անտի ելեալ ի տուն եւ գնացի ի Մղտեսոնցն եւ անտի ի խանութ։

Եւ յայսմ ժամու եկն Մարտիրոս վարդապետն ի Պուրսայու եւ գնաց ի քով Եղիազար վարդապետին ողջունել զնա, եւ անտի ելեալ եկն ի խանն մեր եւ գրեաց գիր Զ եկեղեցոյն եւ Յոճա Ատոմին Վանցոյ թէ Առեալ ի վաճառականացն գայցես ի Սուրբ Նիկողոս վասն լսելոյ զպատուէր սուրբ հօրն մերոյ Աստուածատուր վարդապետին, որպէս եւ ուղարկեաց եղբօր կաթողիկոսին թէ Առցես մէկ քանի խօսք հասկացող և գաս. և յՈւսկիւտարու եւս, և զե թուղթն չնչինս գրեաց. և ելեալ գնաց ի յԱստուածածին։ Եւ